Բացի կատոից, տանեցիներից ուրիշ ոչ ոք չյայտնոեցաւ: Երեխաները, երեւի, քնած էին. նրանց ձայնն անգամ չէր լսւում: Իսկ կանայք այդ կողմերում օտար տղամարդի աչքին երեւնալու սովորութիւն չունէին:

Այգեստանը արժանի էր իր կոչմանը: Քաղաքի այդ գեղեցիկ արուարձանը ծառախիտ այգիների բաւական ընդարձակ տարածութիւն է, բաժանոած լայն փողոցներով, որոնց աջ եւ ձախ կողմերում հոսում են առուակներ, հովանաւորոած ուռենի եւ բարդի ծառերով: Դրսից տները չեն երեւում. ոչ մի լուսամուտ բացոած չէ փողոցի վրայ, բացի գլխաւոր դռնից, որ ներս է տանում դէպի բնակարանը, որ ետեւի կողմից միայն նայում է դէպի այգին կամ պարտէզը: Ամէն մի տուն կենտրոնացոած է իր մէջ, ապրում է իր նեղ առանձնական կեանքով: Վարպետ Փանոսի տունը նոյնպէս այդ ձեւն ունէր:

Սենեակը, որ որոշոած էր մեզ համար, տան երկրորդ հարկումն էր գտնւում: Բաւական կոկիկ մի սենեակ էր այդ, երեւի միայն հիւրերի համար էր պատրաստոած: Տան մէջ որքան գեղեցիկ իրեղէններ կային, իբրեւ զարդարանք, բոլորը դրոած էին այստեղ: Պատուհանների մէջ շարած էին զանազան տեսակ չինական եւ պարսկական ամաններ, ամենահին ժամանակներից մնացած, որոնց շատերը այժմ գործածութիւնից ընկել էին: Նրանց թւում կային պղնձեայ թասեր, աշտանակներ, ափսէներ եւ մեծ բոլորակ սինիներ, բոլորը գեղեցիկ քանդակներով: Կային եւ բազմաթիւ նարգիլէներ ու չիբուխներ՝ երկայն ծխաքարշներով՝ յասմիկի փայտից կամ Շիրազի կեռասենուց պատրաստոած: Երեւում էր, որ այստեղ սովորութիւն կար այնքան թոով չիբուխներ ու նարգիլէներ պահել իր տանը, ինչ թոով պատահաած ժամանակը հիւրեր կունենային: Երեւում էին եւ զէնքեր: Պատերից քարշ էին ընկած զանազան տեսակ պատերազմական գործիքներ, սկսեալ հնադարեան երկաթեայ տապարներից, վահաններից, սաղաւարտներից եւ զրահներից մինչեւ նոր ժամանակների երկայն նիզակները, ղարաբինաները, ատրճանակները եւ հրացանները: Դրանց թւում պատերից քարշ էին ընկած տեղային զանազան նոագարաններ՝ սազ, սանթուր, չոնգուր, սրինգ, դափ, թմբուկ եւ այլն: Երեւում էր, որ տանտէրը ածել եւս գիտէր, կամ դրանք պահւում էին հիւրերի համար: Այդ բոլոր զարդարանքները լրացնում էին մի քանի պատկերներ, որոնք, ինչպէս թւում էր ինձ, հին դարերի գործ պէտք է լինէին: Արդեօք ո՞ւմ պատկերներն էին, ես հասկանալ չկարողացայ, շատ հաւանական էր, որ թաղաւորների, իշխանների պատկերներ լինէին, գոնէ այդպէս էին ցոյց տալիս նրանց թէ զգեստաւորութիւնը եւ թէ զէնքերը, որոնք բոլորը հին ժամանակներին էին պատկանում: Այստեղ ու այնտեղ փունջերով դրած էին չորացրած ծաղիկներ, որոնց մէջ իր գեղեցկութեամբ առաջին տեղը բռ-